# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
# ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔ

---

ՀՀ, Արագածոտնի մարզ, գյ. Շամիրամ, 1-ին փողոց , 24 շենք ,

Հեռ. 093-43-43-58 , mraz.broyan@mail.ru

N 41 06.09..2013թ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ս. ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան.

Ձեզ է ուղարկվում Շամիրամ համայնքի ավագանու 30.08.2013 թվականի թիվ 09 հերթական նիստի արձանագրությունը և որոշումները:

Առդիր 7 էջ:

09 09 2013
7/4466-12

Շամիրամ համայնքի
ղեկավար Մ. Բրոյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
# ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔ

3

30 օգոստոսի 2013 թվական

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9
## ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 3 անդամներ:

Բացակա էին ավագանու անդամներ՝ Սահիդ Օզմանյանը և Ռուստամ Շարոյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էր՝ համայնքի ղեկավարի տեղակալ՝ Թոսուն Քոչոյանը,:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Մրազ Բրոյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Լիլիթ Փողիյանը

*Լսեցին*

*ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի ԹԻՎ 8 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*|Զեկ. ԼԻԼԻԹ ՓՈՂԻՅԱՆ|*

1. ՀՀ Արագածոտնի մարզի Շամիրամ համայնքի վարչական տարածքում նորահայտ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության մասին
2. Բերքահավաքի , կերային կուլտուրաների կատարման աշխատանքների վիճակի մասին:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով համայնքի ավագանին *ո ր ո շ ու մ է* ՝

Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Շամիրամ համայնքի 2013 թվականի օգոստոսի 30-ի թիվ 9 արտահերթ նիստի օրակարգը:

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 33 /

*Լսեցին*

*ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆՈՐԱՀԱՅՏ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ԹՈՍՈՒՆ ՔՈՉՈՅԱՆ/*

Հարգելի գյուղապետ և ավագանի Ձեր ուշադրությանն եմ ներկայացնում ՀՀ Մշակույթի նախարարության ս/թ հուլիսի 30-ին մեզ հասցեագրված գրության բովանդակությունը: Համայնքի վարչական տարածքում առկա են նորահայտ երկու պատմամշակութային հուշարձաններ ՝ դամբարանադաշտ, որը կառուցվել է Ք.ա. 2-1 հազարամյակում և գտնվում է գյուղից 2 կմ հյուսիս, Աշտարակ-Գյումրի մայրուղու երկու կողմում և Գյուղատեղի, որը կառուցվել է Մ. Թ. 11-17-րդ դարերում և գտնվում է գյուղից 2 կմ հյուսիս , Աշտարակ-Գյումրի մայրուղու երկու կողմում:

Առաջարկվել է այդ հուշարձանների պահպանության հարցը դնել համայնքի ղեկավարության ուշադրության կենտրոնում:

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ կետը և ղեկավարվելով <<Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին>> ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով , համայնքի ավագանին *ո ր ո շ ու մ է*՝

Առաջարկել համայնքի գյուղապետ Մրազ Բրոյանին հանձնարարելու ավագանու անդամներ Ռուստամ Աղեյանին , Պրիսկ Հասանյանին , համայնքի ղեկավարի տեղակալ Թոսուն Քոչոյանին ապահովել նորահայտ երկու և համայնքի վարչական տարածքում գտնվող մյուս պատմամշակութային հուշարձանների պահպանությունը:

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 34 /

*Լսեցին*

*ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ, ԿԵՐԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՌՈՒՍՏԱՄ ԱԴԵՅԱՆ/*

Հայտնի է, որ այս տարվա գարունն առատ էր հորդառատ անձրևներով , որին հետևեցին ցրտահարությունն ու կարկտահարությունը: Նշված բնական աղետները զգալի վնաս հասցրին համայնքի ցանքատարածություններին, որի արդյունքում խիստ նվազեց բերքատվությունը: Համայնքի ղեկավարի և համայնքի բնակչության ջանքերի շնորհիվ հաջողվեց փրկել որոշ մաս: Արդյունքում հացահատիկային կուլտուրաների միջին բերքատվությունը կազմեց 12 ց , իսկ կերային խոտաբույսերինը 2.5 տ: Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի և համայնքի ղեկավար Մրազ Բրոյանի առաջարկությունը համայնքի ավագանին *ո ր ո շ ու մ է* '

Առաջարկել համայնքի ղեկավար Մրազ Բրոյանին հանձնարարաելու ավագանու անդամներին և համայնքի ղեկավարի տեղակալ Թոսուն Քոչոյանին էլ ավելի ուշադրություն դարձնել համայնքի գյուղատնտեսական աշխատանքներին ավելի առատ բերք ստանալու համար ` ի նպաստ համայնքի բնակչության:

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 35/

Ամպագանու անդամներ

ՌՈՒՍՏԱՄ ԱԴԵՅԱՆ

ՏՈՄՈՒՆ ՔՅԱԼԱՃՅԱՆ

ՊՐԻՍԿ ՀԱՍԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ______________ Մ. ԲՐՈՅԱՆ

*Նիստն արձանագրեց*՝ Լիլիթ Փողիյանը

2013թ. Օգոստոսի 30
գյ. Շամիրամ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
# ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 օգոստոսի 2013 թվական N 33

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ

30 ՕԳՈՍՏՈՍԻ ԹԻՎ 09 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով ***համայնքի ավագանին որոշում է՝***

1. ՀՀ Արագածոտնի մարզի Շամիրամ համայնքի վարչական տարածքում նորահայտ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության մասին
2. Բերքահավաքի , կերային կուլտուրաների կատարման աշխատանքների վիճակի մասին:

Կողմ -3

1, ՌՈՒՍՏԱՄ ԱՂԵՅԱՆ

2,ՏՈՍՈՒՆ ՔՅԱԼԱՇՅԱՆ

3, ԴՐԻՍԿ ՀԱՄԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ________ Մ. ԲՐՈՅԱՆ

2013թ. Օգոստոս 30
գյ. Շամիրամ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
# ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 օգոստոսի 2013 թվական N 34

### ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆՈՐԱՀԱՅՏ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ կետը և ղեկավարվելով <<Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին>> ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով ***համայնքի ավագանին որոշում է՝***

Առաջարկել համայնքի գյուղապետ Մրազ Բրոյանին հանձնարարելու ավագանու անդամներ Ռուստամ Աղեյանին , Պրիսկ Հասանյանին , համայնքի ղեկավարի տեղակալ Թաթուլ Քոչոյանին ապահովել նորահայտ երկու և համայնքի վարչական տարածքում գտնվող մյուս պատմամշակութային հուշարձանների պահպանությունը:

Կողմ -3

1, ՌՈՒՍՏԱՄ ԱՂԵՅԱՆ

2,ՏՈՄՈՒՆ ՔՅԱԼԱՇՅԱՆ

3, ՊՐԻՍԿ ՀԱՍԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԲՐՈՅԱՆ

2013թ. Օգոստոսի 30
գյ. Շամիրամ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
# ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 օգոստոսի 2013 թվական N 35

### *ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ, ԿԵՐԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ*

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի և համայնքի ղեկավար Մրազ Բրոյանի առաջարկությունը ***համայնքի ավագանին որոշում է՝***

Առաջարկել համայնքի ղեկավար Մրազ Բրոյանին հանձնարարելու ավագանու անդամներին և համայնքի ղեկավարի տեղակալ Թոսուն Քոչոյանին էլ ավելի ուշադրություն դարձնել համայնքի գյուղատնտեսական աշխատանքներին ավելի առատ բերք ստանալու համար ՝ ի նպաստ համայնքի բնակչության:

Կողմ -3

1, ՌՈՒՍՏԱՄ ԱԴԵՅԱՆ

2,ՏՈՍՈՒՆ ՔՅԱԼԱՇՅԱՆ

3, ՊՐԻՍԿ ՀԱՄԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԲՐՈՅԱՆ

2013թ. Օգոստոս 30
գյ. Շամիրամ